ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

08.02.2019թ.
ժամը 17^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 1-ին դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Դիոկսիդ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Դիոկսիդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /11.12.2018թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 530 350 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Դիոկսիդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը (հարկային պարտավորությունները գերազանցում են Օրենքով սահմանված շեմը) և «Դիոկսիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը որակվեց իրականությանը չհամապատասխանող: Այսպիսով հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ «Դիոկսիդ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց և հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ որոշեց վերջինիս տվյալները ուղարկել լիազորված մարմին, եթե «Դիոկսիդ» ՍՊԸ-ն կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող 3-րդ աշխատանքային օրը:

Քանի որ Eauction համակարգը թույլ չէր տալիս մասնակցին մերժել ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքերով, ուստի լիազոր մարմնին հետադարձ կապով խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի բանավոր առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը www.eauction.armeps.am կայքում մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար /17.01.2019թ./, որից հետո վերջինիս համակարգի կողմից ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Անհամապատասխանության շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակցի ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատեց անբավարար /21.01.2019թ./: Արդյունքում «Դիօկսիդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվեց:

Ի գիտություն՝ «Դիօկսիդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց անհամապատասխանությունը՝ «Դիօկսիդ» ՍՊԸ տեսքերը ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված լրացուցիչ տեղեկատվություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայությունը հերքելու վերաբերյալ տեղեկանք՝ /ելք N 2629 26.12.2018թ. և ելք N 38 18.01.2019թ./:

1.2 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգում «Դիօկսիդ» ՍՊԸ-ի հայտը մերժվեց /հարկային պարտավորությունները գերազանցում են Օրենքով սահմանված շեմը/, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղը զբաղեցնող մասնակից ճանչվեց հաջորդաբար տեղ զբաղեցնողը՝ «Անխոցելի» ՍՊԸ-ն և վերջինիս ծանուցվեց ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և նիստը շարունակել «Անխոցելի» ՍՊԸ կողմից վերը նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

1.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «Անխոցելի» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն /24.01.2019թ./ «Անխոցելի» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 6000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որը չի գերազանցում «Անխոցելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի /3 300 000 ՀՀ դրամ/ մեկ տոկոսը և Օրենքով սահմանված շեմը):

1.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց *«Անխոցելի» ՍՊԸ* կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, Հավելված N2-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 3-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

1.6 08.02.2019թ. հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Անխոցելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը և հրավերով պահանջվող փասաթղթերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգում և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.7 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/12» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող	Մ. Հոխեյան